ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 6 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության դիմումի ընդունելիության հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության դիմումը Սահմանադրական դատարան է ուղարկվել փոստային եղանակով՝ 2018 թվականի հունիսի 12-ին: Դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2018 թվականի հունիսի 15-ին:

Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում խնդրել է.

«որոշել ՀՀ ՀՔԾ պետի 26.03.2015թ. 03-Լ հրամանով սահմանված «ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոն զբաղեցնելու համար բաց մրցույթի անցկացման կարգի»-ի 59-րդ կետի, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 1-ին մասի 17-րդ կետի, 3-րդ հոդվածի

1-ին մասի 6-րդ կետի, 26-րդ հոդվածի 1-ին մասի և/կամ դրանց իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը՝ ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 42-րդ, 31-րդ, 34-րդ, 75-րդ, 78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

2. Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավադրույթները, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը, հակասում են ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 5, 6, 42, 31, 34, 75, 78, 79, 80 և 81-րդ հոդվածներին, քանի որ վիճարկվող դրույթների շրջանակներում հայցվող տեղեկատվության տրամադրման մերժումն իրավաչափ նպատակ չի հետապնդում:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ դրանք չեն պարունակում հստակ կարգավորումներ այս կամ այն տեղեկությունը տրամադրելու կամ տրամադրումը մերժելու իրավասության և հիմքերի վերաբերյալ:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթներն իրենց բովանդակությամբ պայմանավորված անորոշությամբ իրավակիրառ պրակտիկայում հանգեցրել են վերջիններիս այնպիսի մեկնաբանության ու կիրառման, ինչը խախտել է Սահմանադրության 42-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը, «... քանի որ համապատասխան տեղեկատվության հրապարակման ուղղակի արգելք կամ սահմանափակում, ինչպես նաև հայցվող տեղեկությունները ստանալու բացառիկ իրավասություն սահմանված չլինելու պայմաններում, այն բխեցվել է վիճարկվող դրույթների անորոշ կարգավորումներից ...»:

3. Ելնելով դիմումի և դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

3.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 6-րդ, 17-րդ կետերի, 26-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ

Խնդրո առարկա գործի շրջանակներում դատական համապատասխան ակտերի, մասնավորապես, Վարչական դատարանի 2016 թվականի հուլիսի 19-ի վճռի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դիմողի համար առաջացած իրավական հետևանք-

ները պայմանավորված չեն վերջինիս կողմից վիճարկվող վերոնշյալ դրույթներով: Բացի դրանից, Վերաքննիչ դատարանի 2017 թվականի հուլիսի 27-ի որոշման մեջ վերոնշյալ դրութների մասին ընդհանրապես որևէ հիշատակում չկա:

ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը, հիմնվելով վերոնշյալ սահմանադրական նորմի վրա, սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ հիմքի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Վերոշարադրյալ սահմանադրական և օրենսդրական նորմերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ անհատական դիմումին առաջադրվող սահմանադրական և օրենսդրական պահանջներից մեկն էլ այն է, որ անհատական դիմում կարող է ներկայացնել այն անձը, որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնա-

գիտացված դատարանի կողմից կիրառվել է նորմատիվ իրավական ակտի դրույթ: Սահմանադրական դատարանը՝ իր 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ, անդրադառնալով, մասնավորապես, «օրենքի դրույթի կիրառում» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման հարցին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ «...իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի...» բառակապակցության մեջ կիրառում հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի կիրառում, երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի կիրառում»:

Վերոշարադրյալի համատեքստում դիմողի կողմից վիճարկվող վերոնշյալ դրույթները չեն կիրառվել նրա նկատմամբ:

3.2. «ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոն զբաղեցնելու համար բաց մրցույթի անցկացման կարգի» 59-րդ կետի վերաբերյալ

Վիճարկվող դրույթի մասով դիմումն ակնհայտ անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը, իր կողմից վիճարկվող դրույթների վերաբերյալ հիմնավորումներ ներկայացնելիս, հիմնականում շեշտադրել է այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթների շրջանակներում հայցվող տեղեկատվության տրամադրման մերժումն իրավաչափ նպատակ չի հետապնդում, մինչդեռ խնդրո առարկա դրույթը սահմանում է մրցույթին ներկա գտնվելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:

Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 4-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս դիմողը՝ « - պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ կիրառված օրենքի նորմի բովանդակությունը և փորձի գնահատել ու նախատեսել Սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, - փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալում սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում,... »:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Դիմումի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դիմումում չեն պահպանվել վերոնշյալ պահանջները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2 և 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

6 հուլիսի 2018 թվականի
ՍԴԴԿՈ/2-20